

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N° 2

«14» փետրվարի 2019 թ. թիվ ԲՆ-ԴՇ-19/06 պայմանագրի

**ք.Երևան**

«20» « 12 » 2019թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Վ.Զիլավյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պետական մարմին», մի կողմից, և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրենի ժ/պ Ա.Մկրտչյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կազմակերպություն», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1792-Ն որոշումը, ինչպես նաև կողմերի միջև 2019 թվականի փետրվարի 14-ին կնքված «ԲՆ-ԴՇ-19/06» ծածկագրով պայմանագրի 8.2 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ Համաձայնագիր) հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

- 1.1. Կողմերը որոշեցին 2019 թվականի փետրվարի 14-ին կնքված «ԲՆ-ԴՇ-19/06» ծածկագրով պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝
  - 1.1.1. Պայմանագրի 1.1 կետում «199 349 300 (մեկ հարյուր ինսունինը միլիոն երեք հարյուր քառասունինը հազար երեք հարյուր)» բառերը փոխարինել «207 641 900 (երկու հարյուր յոթ միլիոն վեց հարյուր քառասունմեկ հազար ինը հարյուր)» բառերով:
  - 1.1.2. Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված N°1-ի «Միջոցառումներ» աղյուսակում՝
    - ա) 5-րդ կետի «պահանջվող գումարը (դրամ)» սյունյակում «58079100» թիվը փոխարինել «66371700» թվով,
    - բ) «Ընդամենը» տողում «199349300» թիվը փոխարինել «207641900» թվով:
  - 1.1.3. Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված N°2-ի «ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագիր» աղյուսակում «Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)» տողի «Տարի» սյունյակի «199349300» թիվը փոխարինել «207641900» թվով:

**2. Այլ պայմաններ**

- 2.1. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**  
Շրջակա միջավայրի նախարարություն

ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք  
ՖՆ գործառնական վարչություն  
ՀՀ 900011000891  
ՀՎՀՀ 02507198

Շրջակա միջավայրի նախարարության  
գլխավոր քարտուղարի ժ/պ

**Վ.Զիլավյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ


Սյունիքի մարզ, ք.Կապան  
ՖՆ գործառնական վարչություն  
ՀՀ 900018003286  
ՀՎՀՀ 09423966

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի  
տնօրենի ժ/պ

**Ա.Մկրտչյան**

(ստորագրություն)

Կ.Տ.



*[Handwritten signature]*